«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետությունը Վրաստանի հետ կապող Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման շուրջ 90կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը:

Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհն սկսվում է Վանաձոր քաղաքից, անցնում է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի 33 համայնքներով (167 419 ընդհանուր բնակչությամբ)՝ շարունակվելով մինչև Բագրատաշենի սահմանակետ:

Ծրագիրն իրականացվում է 2 փուլով՝ Վանաձոր-Թումանյան (38,45կմ) և Թումանյան-Բագրատաշենի մաքսային անցակետ (51,74կմ):

Նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակել է իտալական «Լոտտի ինժեներիա» կազմակերպությունը՝ Եվրոպական ներդրումային բանկի հետ կնքված պայմանագրի համաձայն:

Ֆինանսավորման աղբյուրները ՝

- **1-ին փուլ** (Վանաձոր-Թումանյան, 38,45կմ)՝ Եվրոպական ներդրումային բանկ (51 մլն եվրո) և ՀՀ կառավարություն (10.2 մլն եվրո)
- **2-րդ փուլ** (Թումանյան-Բագրատաշենի մաքսային անցակետ, 51,74կմ)՝ Ասիական զարգացման բանկ (44.04 մլն եվրո) և ՀՀ կառավարություն (10.14 մլն եվրո):

1-ին փուլի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2016թ. սեպտեմբերին: Ճանապարհահատվածը հիմնանորոգվել է և հանձնվել է շահագործման 2018թ. դեկտեմբերի 24-ին: Շինաշխատանքների արժեքը կազմել է 19,356 մլրդ դրամ:

<u>Կապալառու կազմակերպություններ՝</u>

- «Արարատ ճանշին ՍՊԸ և Քոնսթրաքշն Քոմփանի Դորլիդեր ՍՊԸ» ՀՁ

- «Ճանապարհ ՍՊԸ և Կամուրջշին ՓԲԸ» ՀՁ
- «Կապավոր» ՍՊԸ

Տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերություն՝ «Քոքս Քընսալթ ՋիԷմԲիԷյչ և Էջիս Ինտերնեյշընըլ» ՀՁ

2-րդ փուլի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018թ. մայիսի 29-ին։

Կապալառու կազմակերպություններ՝

- «Հորիզոն-95 ՍՊԸ և Օբերոսլեր ԿԱՎ Պիետրոս» ՀՁ
- «Բլաք Սի Գրուփ և ԱԱԲ Պրոեկտ ՍՕԸ» ՀՁ
- «Սուարդի» ԲԸ

Տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերություն՝ «Սաֆեժ ՍԱՍ և Հիլլ Ինտերնեյշընըլ» համատեղ ձեռնարկություն

Աշխատանքների ներկա կարգավիճակը

Ծրագրի շրջանակներում լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտություն է առաջացել։ Մասնավորապես, կատարվել են մի շարք կարևոր նախագծային փոփոխություններ և լրացուցիչ աշխատանքներ, ինչպիսիք են՝ նախկինում չնախատեսված շուրջ 910մ կոյուղագծի և 5,8կմ 530մմ տրամագծով ջրագծի կառուցումը, նոր նախագծով կապի օպտիկամանրաթելային մալուխագծերի անցկացումը։ Իրականացվել է ճանապարհի՝ Ալավերդու քաղաքային հատվածի արտաքին լուսավորությունը։ Փոխվել է ճանապարհի 58-րդ կմ-ում ծրագիծը՝ աջակողմյան բարձր ժայռային զանգվածից հեռացնելու նպատակով։ Ավարտական փուլում է Ալավերդի քաղաքի արևմտյան մուտքի երթևեկության անվտանգության բարելավումը։ Լրացուցիչ աշխատանքների շրջանակներում մեկնարկել է նաև Ալավերդի քաղաքի զույգ կամուրջների վերակառուցումը։

2022թ. օգոստոսի 1-ի դրությամբ հիմնանորոգվող 51,74կմ երկարությամբ ճանապարհի 47.08կմ-ի (91%) պատվածքը, ներառյալ ասֆալտբետոնե վերին շերտը, ամբողջությամբ կառուցված է։ 4.66կմ-ում (9%) ճանապարհային հագուստի կառուցման աշխատանքներն ընթացքում են։